ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք. Երևանյան 4

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 62

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.07.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Նոյեմբերյան համայնքի ավագանու 07.07.2020 թվականի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԽԱՉԻԿՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷՄՄԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք. Երևանյան 4

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 63-Ա

## ՀԵՌԱԳՆԱ ՍԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԸՍՏ ՍԱՐԱՄԱՍԻ ՆԱԽԿԻՆ ՕԳՏԱՏԵՐԵՐԻՆ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, հաշվի առնելով, որ մինչև 2010 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը մարզպետների կառավարմանը հանձնված տարածքները նախկինում ՀՀ նախարարների խորհրդի համապատասխան որոշումներով մշտապես կցվել և օգտագործվել են համայնքների վարչական տարածքում, որի հետևանքով առաջացել են բազում խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հարցի կարգավորման համար առաջարկել Նոյեմբերյան համայնքի ղեկավարին ձեռնարկելու համապատասխան միջոցներ:
2. Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Նոյեմբերյան համայնքի կողմից մշտապես օգտագործվող հեռագնա սարամասերն ընդգրկվել են Դիլիջան, Ծաղկավան, Կիրանց և Կողբ համայնքների վարչական սահմաններում, դիմել Դիլիջան, Ծաղկավան, Կիրանց և Կողբ համայնքների ավագանիներին, տալու համաձայնություն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, սահմանված կարգով, ըստ սարամասերի նախկին օգտագործման սահմանների, փոփոխություններ կատարելու համար օրենքի նախագիծը ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ անհարժեշտության դեպքում լրացուցիչ տրամադրել հողատարածքների հատակագծերը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԽԱՉԻԿՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷՄՄԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք. Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 64-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ 1 (ՄԵԿ) ՔՄ ՄԱԿԵՐԵՍԻ ՀԱՄԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Նոյեմբերյան համայնքի ղեկավարի առաջարկությանը օտարել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող ՀՀ Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, գյուղ Ոսկեպար, Հովվի ջուր հանդամաս թիվ 1 հասցեում գտնվող 0.0605 հա մակերեսով, ծածկագիր 11-049-0203-0003, հողամասը (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների):

1) օտարման մեկնարկային գին սահմանել 100 ՀՀ դրամ /1 (մեկ) քմ-ի համար/:
2) տարածքն օգտագործել ըստ նպատակային նշանակության:
3) տարածքի օտարման գործընթացն ապահովել 1 /մեկ/ տարվա ընթացքում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԽԱՉԻԿՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷՄՄԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք. Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 65-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011 թվականի 1920-Ն որոշման 60-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 22.06.2020 թվականի թիվ 2/փ-54 եզրակացությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքային սեփականություն հանդիսացող 0.051227 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերի հողերից (ծածկագիր 11-050-0089-0002) 0.012015 հա մակերեսով հողամասը փոխադրելու նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԽԱԶԻԿՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷՄՄԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք. Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 66-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ 1 (ՄԵԿ) ՔՄ ՄԱԿԵՐԵՍԻ ՀԱՄԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Օտարել Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Նոյեմբերյան Հաղթանակի փողոց 13/2 հասցեում գտնվող 0.1 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման):

1) օտարման մեկնարկային գին սահմանել 810 ՀՀ դրամ /1 (մեկ) քմ-ի համար/:

2) տարածքն օգտագործել ըստ նպատակային նշանակության:

3) տարածքի օտարման գործընթացն ապահովել 1 /մեկ/ տարվա ընթացքում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԽԱՉԻԿՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԷՄՄԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ